



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Համբարձում Մաթևոսյան

«18» 05 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 063 - 26

Նախաձեռնող՝

«Ձանգված» ՍՊԸ
ք. Երևան, Գյուլիբեիյան Փ./7/11 Նոր Նորք

Գործունեությունը՝

**Մ. Նալբանդյանի անվան թիվ 33 հիմնական
դպրոցի կառուցում**
Երևան, Կենտրոն վարչական շրջան

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 063 - 26

« 18 » 05 2026թ.

Երևանի Կենտրոն վարչական շրջանի Նար-Դոս փողոցի 38 հասցեում նախատեսվող Մ. Նալբանդյանի անվան թիվ 33 հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«Զանգված» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ /Բ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Երևան, Կենտրոն վարչական շրջան

Ներածական մաս. Երևանի Կենտրոն վարչական շրջանի Նար-Դոսի փողոց 38 հասցեում նախատեսվում է կառուցել Մ. Նալբանդյանի անվան թիվ 33 հիմնական դպրոցի նոր շենքը: Դպրոցի շենքը նախագծված է որպես հանրակրթական նշանակության օբյեկտ և նախատեսված է հիմնական կրթական ծրագրի իրականացման համար՝ ապահովելով ժամանակակից ուսումնական միջավայր և համապատասխան ֆունկցիոնալ պայմաններ: Գործունեության համար տարածքը գտնվում է Նար-Դոս և Ռոստոմ փողոցների հարևանությամբ: Անմիջական հարևանությամբ առկա են բնակելի և հասարակական շենք-շինություններ: Նախատեսվող գործունեության իրականացման նպատակով ապամոնտաժման են ենթակա հին դպրոցի և կաթսայատան շենքերը:

Համաձայն անշարժ գույքի նկատմամբ պետական գրանցման վկայականի՝ հողի նպատակային նշանակությունը բնակավայրերի է, գործառնական նշանակությունը՝ խառը կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն:

Նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8 -րդ կետի ա. ենթակետի:

Նկարագրական մաս Նախագծի իրականացման համար հիմք են հանդիսացել Երևան համայնքի կողմից 2026 թվականի հունվարի 15-ին տրված ՈՆԹ-0371-26 նախագծման թույլտվությունը և 2021 թվականի օգոստոսի 17-ին տրված 01-006-0234-0017 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման N 17082021-01-0137 վկայականը:



Նոր հանրակրթական դպրոցը նախատեսված է 396 աշակերտի համար, մեկ ստորգետնյա և երեք վերգետնյա հարկերով, երկաթբետոնե կմախքով, մոնոլիտ սյուներով և սալերով, առանձին կաթսայատնով:

Դպրոցի շենքում նախատեսված են ուսումնական, մասնագիտական, դասասենյակներ, լաբորատոր սենյակներ, վարչական տարածքներ, մարզադահլիճ, ճաշարան, տեխնիկական և օժանդակ սենյակներ: Դպրոցի շենքի հիմնական մուտքերն ու էվակուացիոն ելքերը նախագծված են գործող հրդեհային անվտանգության և տարհանման նորմերին համապատասխան: Տարածքում նախատեսված են նաև շարժման սահմանափակումներ ունեցող անձանց համար հարմարեցված մուտքեր և հաղորդակցման տարրեր:

Դպրոցի ներքին հաղորդակցությունն ապահովվում է աստիճանավանդակներով և անհրաժեշտության դեպքում վերելակով: Աստիճանավանդակների և դռների լուծումները նախատեսված են հակահրդեհային պահանջներին համապատասխան՝ ապահովելով արտակարգ իրավիճակների դեպքում անվտանգ շահագործումը:

Դպրոցի շենքի արտաքին պարփակող պատերն իրականացվելու են ժամանակակից շինարարական և ջերմամեկուսիչ նյութերով՝ ապահովելով էներգաարդյունավետություն, ջերմային հարմարավետություն և մթնոլորտային ազդեցություններին դիմակայունություն: Ֆասադային լուծումներն ընտրված են համահունչ գունային ու նյութական լուծումներով:

Դպրոցի շենքում նախատեսվում են կենտրոնացված ինժեներական համակարգեր՝ ջեռուցում, օդափոխություն և անհրաժեշտության դեպքում, օդորակում, ինչպես նաև էլեկտրամատակարարման, ջրամատակարարման և կոյուղու համակարգեր՝ գործող նորմերի պահանջներին համապատասխան: Ջրամատակարարումն ու կոյուղին միացվելու են քաղաքային ցանցին: Ջեռուցման համակարգը լինելու է առանձին՝ կաթսայատան միջոցով:

Տարածքում առկա են բոլոր ենթակառուցվածքները, այդ թվում «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի ջրագիծն ու կոյուղատարը: Նախատեսվում է՝ մինչև շինարարական աշխատանքների սկիզբը «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ կնքել պայմանագիր:

Դպրոցի բակային տարածքում նախատեսվում է ձևավորել երեխաների հանգստի և ֆիզիկական ակտիվության համար նախատեսված հատվածներ, բացօթյա մարզադաշտ, ֆուտբոլի դաշտ՝ 21x35 մ չափերով, բարեկարգել և կանաչապատել դեկորատիվ ծառերով, թփերով և սիզամարգերով: Նախատեսվում է ապահովել հրշեջ տեխնիկայի մոտեցման հնարավորությունը: Ծածկույթները նախատեսվում են կիսաջրանցիկ, որոնք բարելավելու են մակերևութային ջրերի հեռացումը և տարածքի էկոլոգիական վիճակը:

Դպրոցի շենքի տանիքը լինելու է հարթ՝ տեխնիկական սպասարկման և անհրաժեշտության դեպքում կանաչապատման կամ այլ ֆունկցիոնալ օգտագործման հնարավորությամբ: Տարածքում նախատեսվում են նաև մուտքային հատվածների, մայթերի և հարակից տարածքների բարեկարգման աշխատանքներ:

Դպրոցի նկուղային հարկի մակերեսը կազմելու է 1057.0 մ², նախատեսված են տեխնիկական և սպասարկման սենյակներ (ինժեներական հանգույցներ, պահեստներ, հրաձգարան, արհեստանոց, պարզագույն թաքսոոց, սանհանգույցներ), սանիտարատեխնիկական հանգույցներ, օժանդակ տարածքներ:

Առաջին հարկը զբաղեցնելու է 2650.0 մ² տարածք, որտեղ նախատեսված են դասարաններ (տարրական, լրգուպետ, մանկական հոգեբան, հատուկ մանկավարժ և լաբորատորիաներ, պահեստներ), ճաշարան՝ օժանդակ տարածքներով, առաջին բուժօգնության սենյակ,



մարզադահլիճ, միջոցառումների դահլիճ, երաժշտության դասասենյակ, սանհանգույցներ աշակերտների և անձնակազմի համար, ընթերցասրահ, գրադարան:

Երկրորդ հարկը զբաղեցնելու է 2050.0 մ² տարածք, որտեղ նախատեսված են տնօրենի, փոխտնօրենի աշխատասենյակները, ուսուցչանոցը, քնի կազմակերպման սենյակը, դասասենյակները (միջին և տարրական, կերպարվեստի, համակարգչային):

Երրորդ հարկը զբաղեցնելու է 1350.0 մ² տարածք, որտեղ նախատեսված են դասարաններ (միջին և մասնագիտական, ռազմագիտության /պահեստ/, տեխնոլոգիայի), բացօթյա աստղադիտարան /աստղադիտարանի պահեստ/:

Նախատեսվող ծրագրի իրականացման (կառուցման) աշխատանքները կունեն մոտ 2-3 տարի: Շինարարության համար նախատեսված նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված կազմակերպություններից:

Շինարարական աշխատանքերի ընթացքում, առաջացող թափոնատեսակները՝ կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբը (բացառությամբ խոշոր եզրաչափերի), դպրոցի շենքի քանդումից առաջացած շինարարական աղբն ըստ առաջացման կտեղափոխվեն քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր: Հողային հանույթի ընդհանուր ծավալը կկազմի 18200 մ³, ինչը նախատեսվում է օգտագործել որպես հետլիցք, իսկ մնացորդը՝ տարածքների հարթեցման նպատակով:

Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է հատել վնասված և չորացած մոտ 75-80 ծառ: Նախատեսվում է իրականացնել 100-110 ծառերի և խոշոր թփերի տնկման աշխատանքներ:

Գործունեության իրականացման ընթացքում օդային ավազանի հնարավոր աղտոտվածությունը լինելու է կարճատև և թույլատրելի նորմերի սահմաններում:

Շինարարական աշխատանքների ընթացքում աղմուկի և թրթռման մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ, կրելու է ժամանակավոր բնույթ և լինելու է նորմերի սահմաններում:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- սորուն նյութերը (ավազ, գաջ, ցեմենտ) պահեստավորվելու են փակ տարածքներում կամ ծածկելու են անթափանց թաղանթներով,
- աշխատանքներն իրականացվելու են միայն ցերեկային ժամերին,
- կառուցապատման ենթակա տարածքը ցանկապատվելու է,
- շինությունները ծածկվելու են համապատասխան բարձրությամբ անթափանց թաղանթով,
- փոշենստեցման նպատակով շինարարական աշխատանքների ընթացքում իրականացվելու է ջրցան, օդի դրական ջերմաստիճանի դեպքում պարբերաբար,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումն իրականացվելու է փակ ծածկով մեքենաներով,
- պարբերաբար ստուգվելու է շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացվելու է կարգավորում,
- իրականացվելու է շինարարական հրապարակից դուրս եկող ավտոմեքենաների անվադողերի վլացում,



- շինարարական աշխատանքներում նախատեսվում է ներգրավել աղմուկի առաջացման ժամանակ ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում,
- բոլոր մեքենաներն ապահովված են լինելու համապատասխան խլացուցիչներով,
- կենցաղային և շինարարական աղբը տեղափոխվելու է հատուկ հատկացված վայր, քաղաքապետարանի հետ համաձայնեցված՝ պայմանագրային հիմունքներով,
- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումն իրականացվելու է համապատասխան մասնագիտացված կետերում,
- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում մասնագիտացված կազմակերպությունների մեքենաներով՝ ըստ պահանջի,

Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի պարբերական չափումներ՝ ամեն օր, շինարարական աշխատանքների ընթացքում,
- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ շաբաթ մեկ անգամ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ շաբաթական մեկ անգամ հաճախականությամբ, շինարարական աշխատանքների ընթացքում,

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան հատկացնել 240.000 հազ. ՀՀ դրամ:


Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ փորձաքննական գործընթացում Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի ղեկավարի նստավայրում անցկացված հանրային լսման ընթացքում նախատեսվող գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմնի և հանրային լսման մասնակիցների կողմից արժանացել է հավանության:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության, կադաստրի կոմիտեները, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանը:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հաշվետվության լրամշակված տարբերակում:

Ամփոփելով հաշվետվության բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

Փորձաքննական պահանջներ



1. Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում խստագույնս հետևել ՇՄԱԳ հաշվետվությունում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հաշվետվությունում ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:
2. Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության կանոններն ու նորմերը:
3. Բետոնի տեղափոխումն իրականացնել ՇՄԱԳ հաշվետվությունում նախատեսված ձևով՝ բացառելով շինարարական հրապարակում կամ հարակից տարածքներում բետոնի արտադրությունը:
4. Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված:
5. Շինհրապարակից դուրս եկող մեքենաների անվադողերը լվանալ, իսկ առաջացած կեղտաջուրը հեռացնել՝ միացնելով ջրահեռացման համակարգին:
6. Կառուցապատման աշխատանքների ժամանակ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, պահպանել արտանետվող փոշու և առաջացող աղմուկի ու թրթռումների թույլատրելի մակարդակը:
7. Պարսպապատել շինարարական հրապարակները, իսկ ապամոնտաժվող շենքերն ու շինությունները ծածկել շինարարությանը համապատասխան բարձրության անթափանց թաղանթով: Ապամոնտաժվող շինարարական թափոնների տեղափոխումն իրականացնել Երևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:
8. Տարածքի կանաչապատումն իրականացնել ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան և կանաչ տարածքների համար ապահովել ոռոգման համակարգ:

ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍ

«Զանգված» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Նար-Դոս փողոցի 38 հասցեում նախատեսվող Մ. Նալբանդյանի անվան թիվ 33 հիմնական դպրոցի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝



Հեղինակ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ

Հովիկ Մեսրոպյան